

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ



ՅԱՂԹԱՆԱԿԸ

ՅԱԻԵԼՈՒԱԾ «ԱՆԱՅԻՏ» Ի



ՓԱՐԻՋ

ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ Տ. ՏՕՂԱՄԱՅԵԱՆ

1908

Հայկազունի Գրադրոսին Ս. ՏՕԼՐԱՄԱԾԻԱՆ
Իմպ. Դ. ԴՕԿՐԱՄԱԾԻԱՆ
18, Րուօ ԴԵՍ ԳՕԲԵԼԻՆՍ, 18, ՓԱՐԻՍ.

Հայկազունի Գրադրոսին Ս. ՏՕԼՐԱՄԱԾԻԱՆ
Իմպ. Դ. ԴՕԿՐԱՄԱԾԻԱՆ
18, Րուօ ԴԵՍ ԳՕԲԵԼԻՆՍ, 18, ՓԱՐԻՍ.

Հայկազունի Գրադրոսին Ս. ՏՕԼՐԱՄԱԾԻԱՆ
Իմպ. Դ. ԴՕԿՐԱՄԱԾԻԱՆ
18, Րուօ ԴԵՍ ԳՕԲԵԼԻՆՍ, 18, ՓԱՐԻՍ.

Հայկազունի Գրադրոսին Ս. ՏՕԼՐԱՄԱԾԻԱՆ
Իմպ. Դ. ԴՕԿՐԱՄԱԾԻԱՆ
18, Րուօ ԴԵՍ ԳՕԲԵԼԻՆՍ, 18, ՓԱՐԻՍ.

Հայկազունի Գրադրոսին Ս. ՏՕԼՐԱՄԱԾԻԱՆ
Իմպ. Դ. ԴՕԿՐԱՄԱԾԻԱՆ
18, Րուօ ԴԵՍ ԳՕԲԵԼԻՆՍ, 18, ՓԱՐԻՍ.

Հայկազունի Գրադրոսին Ս. ՏՕԼՐԱՄԱԾԻԱՆ
Իմպ. Դ. ԴՕԿՐԱՄԱԾԻԱՆ
18, Րուօ ԴԵՍ ԳՕԲԵԼԻՆՍ, 18, ՓԱՐԻՍ.

Հայկազունի Գրադրոսին Ս. ՏՕԼՐԱՄԱԾԻԱՆ
Իմպ. Դ. ԴՕԿՐԱՄԱԾԻԱՆ
18, Րուօ ԴԵՍ ԳՕԲԵԼԻՆՍ, 18, ՓԱՐԻՍ.

Հայկազունի Գրադրոսին Ս. ՏՕԼՐԱՄԱԾԻԱՆ
Իմպ. Դ. ԴՕԿՐԱՄԱԾԻԱՆ
18, Րուօ ԴԵՍ ԳՕԲԵԼԻՆՍ, 18, ՓԱՐԻՍ.

Հայկազունի Գ. ՏՕԼՐԱՄԱԾԻԱՆ
Imp. D. DOGHRAMADJIAN
18, Rue des Gobelins, 18, PARIS.

Հայկազունի Գրադրոսին Ս. ՏՕԼՐԱՄԱԾԻԱՆ
Իմպ. Դ. ԴՕԿՐԱՄԱԾԻԱՆ
18, Րուօ ԴԵՍ ԳՕԲԵԼԻՆՍ, 18, ՓԱՐԻՍ.

Հայկազունի Գրադրոսին Ս. ՏՕԼՐԱՄԱԾԻԱՆ
Իմպ. Դ. ԴՕԿՐԱՄԱԾԻԱՆ
18, Րուօ ԴԵՍ ԳՕԲԵԼԻՆՍ, 18, ՓԱՐԻՍ.

Հայկազունի Գրադրոսին Ս. ՏՕԼՐԱՄԱԾԻԱՆ
Իմպ. Դ. ԴՕԿՐԱՄԱԾԻԱՆ
18, Րուօ ԴԵՍ ԳՕԲԵԼԻՆՍ, 18, ՓԱՐԻՍ.

Հայկազունի Գրադրոսին Ս. ՏՕԼՐԱՄԱԾԻԱՆ
Իմպ. Դ. ԴՕԿՐԱՄԱԾԻԱՆ
18, Րուօ ԴԵՍ ԳՕԲԵԼԻՆՍ, 18, ՓԱՐԻՍ.



Հայկազունի Գրադրոսին Ս. ՏՕԼՐԱՄԱԾԻԱՆ
Իմպ. Դ. ԴՕԿՐԱՄԱԾԻԱՆ
18, Րուօ ԴԵՍ ԳՕԲԵԼԻՆՍ, 18, ՓԱՐԻՍ.


Հայկազունի Գրադրոսին Ս. ՏՕԼՐԱՄԱԾԻԱՆ
Իմպ. Դ. ԴՕԿՐԱՄԱԾԻԱՆ
18, Րուօ ԴԵՍ ԳՕԲԵԼԻՆՍ, 18, ՓԱՐԻՍ.

Հայկազունի Գրադրոսին Ս. ՏՕԼՐԱՄԱԾԻԱՆ
Իմպ. Դ. ԴՕԿՐԱՄԱԾԻԱՆ
18, Րուօ ԴԵՍ ԳՕԲԵԼԻՆՍ, 18, ՓԱՐԻՍ.

Հայկազունի Գրադրոսին Ս. ՏՕԼՐԱՄԱԾԻԱՆ
Իմպ. Դ. ԴՕԿՐԱՄԱԾԻԱՆ
18, Րուօ ԴԵՍ ԳՕԲԵԼԻՆՍ, 18, ՓԱՐԻՍ.

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

ՅԱՂԹԱՆԱԿԸ



Էնչ որ Տաճկաստանի մէջ կ'անցնի երկու երեք ամսէ ի վեր, հրաշքի մտեցող, հեքեթի նմանող բան մըն է, հոյակապ ու ապշեցուցիչ:

Դեռ երէկ խաւարի մէջ մըլոտած գարշահոտ անհուն բանտի մը երեւոյթն ընծայող Օսմանեան Պետութիւնը՝ յանկարծական կերպարանափոխութեամբ մը՝ կարծես մոգական գաւազանի մը հարուածին տակ՝ մէկ օրէն միւսը ազատ երկիր մը դարձած, մաքրուած, ապանխուած, ուրախութեամբ արբշիտ, արեւուն մէջ կը խայտայ:

Ոչ միայն յանկարծական է կերպարանափոխութիւնը, այլ եւ իրական, արմատական:

Դիւանագիտական խաղի մը համար՝ « վերէն » շնորհուած սահմանադրական թղթի մը օղին մէջ խաբուսիկ ու վաղանցուկ ծածանումը չէ: Ժողովրդական ալիքին հզօր ծառացումովը բռնապետութեան հիմնայտակ քայքայումն է եւ վճռական հաստատումը Ազատութեան:

Այն սքանչելի կանոնաւորութիւնը, կարգապահութիւնը, համերաշխութիւնը, հանդարտ կորովը, անխնջ եւ անսայթաք դիւրութիւնը, որով թուրք վերանորոգիչ կուսակցութիւնը, դեռ երէկ մութի մէջ թաղուած, անզօր կարծուած, այսօր կը վարէ Տաճկաստանը, Մակեդոնացի յեղափոխականներուն կամաւոր զինաթափութիւնը՝ եւ վերանորոգուած թուրքոյ

հետ համաձայնութեամբ իրենց դատը լուծելու ցանկութիւնը, եւրոպական բոլոր Պետութեանց — նոյն իսկ անոնց որ այս անակնկալէն դժգոհ ըլլալու պատճառներ ունին, — սահմակած ու յարգալից վերաբերմունքը հանդէպ այս յեղակարծօրէն ոտքի կանգնող եւ լիակատարօրէն կենսունակ նոր թուրքոյին, մասնաւորապէս Անգլիոյ փութկոտութիւնը Մակեդոնական հարցին մէջ իր բռնած հակաթուրք թաքթիքը մէկդի դնելով թուրք վերանորոգիչներու կուսակցութեան հանդէպ սիրալիբ ընթացք մը ցոյց տալու, այս բոլորը որոշապէս կ'ապացուցանէ թէ Օսմանեան Պետութեան վերածնունդը ճշմարտ է ու տեւական:

Մօտէն քննելով երեւոյթը, կը նկատենք արդէն թէ այդ հէքեթը, այդ հրաշքը բացարձիկ են՝ առանց ո եւ է մոգական միջամտութեան պէտք մնալու:

Հայը, ուսմանթիկ, խանգոտ, զոհասէր ցեղ, տարիներէ ի վեր իր յեղափոխութեան կարմիր արօրովը պատտեց հերկեց օսմանեան հողը, ցանեց հոն իր յանդուգն երազներուն սերմերը, եւ՝ անհաշիւ վեհանձնութեամբ մը հեղեղօրէն թափելով մարտիրոսական արիւնը՝ ոտոգեց այդ հողը եւ զայն հասուն դարձուց Ազատութեան հունձքին համար: Մակեդոնական ընդվզումը, արարական ապստամբութիւնը, ալպա-

նական շարժումները աճեցուցին այդ սերմերը : վայրկեանը եկած էր. քաղողը պէտք էր յայտնուէր : Եւրոպական տէրութիւններէն ոմանք, երկայն տարիներու ամուլ յամեցումներէ, ճրգճգումներէ, զիրար չեզոքացնող նախանձատութիւններէ յետոյ՝ կը թուէին վեր՝ ապէս հնձաքաղի դերը կատարելու տրամադիր ըլլալ: Բայց ազատական թուրքերը, զաւակներ՝ առողջ, պարզ ու հուժկու ցեղի մը որ անցեալին մէջ քաջավարժ եղած է՝ ռազմական դաշտին վրայ՝ հարուածը անվրէպ նպատակին հասցնելու, զիտցան՝ ճիշդ բուսկին՝ բարձրացնել բազուկ մը կուրովի ու ճարպիկ, եւ հունձքը քաղեցին : Երիտասարդ-թուրքերը ապացուցին որ իրենց Պետութեան մէջ եւրոպական բեժիմ մը հաստատելու համար պէտք չունէին Եւրոպայի միջամտութեան: Երեւան Եկաւ որ Եւրոպացւոյ ամբողջութենէն եւ Հայոց մէկ ստուար մասէն զեռ մինչեւ երէկ ուժեղ ու տեւական զործունէութիւն մը ունենալու անկարող ու միմիայն բողոքարկու շարժման մը մէջ սահմանափակուող կարծուած այդ Երիտասարդ-թուրք կուսակցութիւնը, երկարատեւ համբերութիւնէ մը յետոյ որ իսկապէս ապշեցուցիչ ալ էր եւ յուսահատեցուցիչ այդ ռազմիկ ցեղին կողմէ, հասունցած, խորցած, նրբացած՝ ոչ միայն թուրք նոր սերունդներուն եւրոպական գաղափարներու հետ չփմամբը, այլ մանտաւնդ ցեղին Վաւազոյն անդամներուն անխիղճ խորտակումին, թուրք անունին անձոռնի բեժիմի մը պատճառով անպատուումին եւ Օսմանեան Պետութեան գոյութեանն իսկ սպառնացող վտանգին զիտակցութեան կսկծեցուցիչ-ցաւէն, ամօթէն ու սարսափէն, ճնձայն անչլուկ պատրաստած, ամբարած, կազմակերպած էր թե՛ մը ամուր Եւրասիայի տարած, որ կայծի մը կը սպասէր պայթելու համար :

Բեվալի անգլո-ոսու հանդիպումը վճռական շարժառիթը եղաւ այդ կայծը ծննդեցանոր թուրք հայրենասէր զինուորականները զգացին որ Մակեդոնիոյ Օսմանեան Պետութենէն անջատուածը այլ եւս անխնայութիւն էր, եւ թէ այդ դէպքին կարող էր յաջորդել ամբողջ Պետութեան անդամահատութիւնը: Իրենց արիագոյնները, արգէն իսկ դէպ ի բունն ու կարող միջոցներով գործոն յեղափոխութիւն մղուած ու խրախուս-

ուած՝ Հայ Յ. Իսախանցութեան նախաձեռնութեամբ անցեալ տարի Փարիզ գումարուած Բոսկրէին որոշումներէն, փութացին Օսմ. Պետութեան վերեւ կախուած այդ վտանգին առաջին անունը՝ ապստամբութեամբ մը, որ միեւնոյն ատեն հայրենասիրական էր եւ ազատասիրական, քանի որ միանգամայն եւրոպական միջամտութեան դէմ կը բողոքէր եւ թուրք բռնապետական բեժիմը կործանելով ներքին ազատական ուժերուն ձեռքով իսկ կը ձգտէր բարենորոգել Մակեդոնիան. ու ամբողջ Պետութիւնը : Այս երկայրի նշանակութիւնն ունենալուն համար է որ ապստամբութիւնը յաջողեցաւ, տարօրինակ ապստամբութեամբ, իրեն համակիր ու աջակից դարձնել, ոչ միայն բոլոր երիտասարդ թուրքերը, այլ եւ բոլոր պարկեշտ ու հայրենասէր հին թուրքերը որ տիրապետող բեժիմին փտութենէն զղուած, երկրին ապագայէն յուսահատած, Եւրոպայի սպառնական յառաջխաղացութենէն ստրտափած, անձկագին կը սպասէին փրկարար ուժի մը՝ իրենք ալ չգիտնալով թէ ո՞րտեղէն պիտի գան օգնիկա : Մէկ հարուածով, հայրենասէր թուրք զինուորականները կործանուած փրկեցին Օսմանեան Պետութիւնը Եւ անոր մէջ ստատութեան յաղթանակն ապահովեցին : Երիտասարդ թուրք կուսակցութիւնը զիտցաւ իմաստնօրէն օգտուել զինուորականներուն խիզախ փեսթով ստեղծուած նոր կացութենէն, եւ այդ կացութիւնը տեւական դարձնելու, զայն Օսմանեան բոլոր ժողովուրդներուն սիրելի ու եւրոպական պետութեանց ընդունելի ընելու համար՝ վարուեցաւ, գոնէ մինչեւ ցարդ, թաքթով մը, շրջահայեցութեամբ մը եւ ճարտարութեամբ մը, որ ամէն գովեստէ վեր էր :

Վաղուան պատմագրանքները, համադրութիւնը քննելով քսան տարիէ ի վեր Օսմանեան Պետութիւնը ցնցող Տագնապին այս լուծմանը, պիտի տեսնեն անոր մէջ ամէն բանէ առաջ՝ թուրք ու Հայ ցեղերու այլազան, նոյնքան կարեւոր ու զիրար լրացնող մասնայատկութեանց խաչածեւումին արդիւնքը : Եւ քիտի հետեւցնեն թէ այդ Պետութիւնը՝ մշտապէս ուժեղ մնալու եւ միշտ դէպ ի ազատականութիւն զիմելու համար՝ պէտք

ունի որ Միտհաթ փաշայի ցեղը եւ Գրիգոր Ստեանի ցեղը գիտնան զիրար լրջօրէն ճանչնալ ու գնահատել եւ իրենց խառնուածքի եւ աւանդութեանց լաւագոյն տարբերուն տարբերութեամբն իսկ զիրար ամբողջացնելով Պետութեան կազմածքը պահեն ուժեղ, ազատ եւ կենսունակ :

Ես կը ցանկայի որ Միտհաթ փաշայի արձանին քով, Օտեանի արձանը կանգնէր Պոլսոյ մեծածոյն հրապարակին վրայ, ոչ միայն Պետութեան բոլոր ժողովուրդներուն երախտագիտութեան իբր մշտական յիշատակարան մը՝ բարձրացած ի պատիւ այդ երկու մեծ մտքերուն, որ միասին յղացան, ծրագրեցին եւ առաջին անգամ մարմնաւորեցին Օսմանեան սահմանադրութիւնը, այլ եւ յաւերժացնելու համար թուրք-հայ ազատասէր համերաշխութեան գաղափարը :

Թուրք-հայ համերաշխութիւնը կատարուած իրողութիւն մըն է հիմայ, ոչ կասկածախառն, թէօրիական, քոնկրէական ձեւով, այլ կեանքի տաք եւ ինքնարուեստ մղումով մը անկեղծօրէն իրականացած : Թուրք ազատական սերունդը, իր ճիգը պսակող բաղարձակ յաղթանակին կատարէն, ազնուօրէն կը խոնարհի հայ նահատակներուն հողակոյտին առջեւ, եւ զայն կ'օրհնէ իբրեւ հիմն քարը Օսմանեան Պետութեան վերանորոգուած շէնքին Խորապէս զգածուած այդ ազնիւ ժեսթէն, Հայ ազգը իր եկեղեցիին մէջ հանդիսաւոր հոգեհանգիստ կը կատարէ ի յիշատակ ազատութեան համար հազարներով ծովամոյն եղած, զնդաններու մէջ մեռած թուրքերու, եւ Քրիստոսեայ տաճարին հովանւոյն տակ թուրք իւրէման, զխուորականն ու մտաւորականը, հայ գրագէտը, եկեղեցականն ու վաճառականը կ'եղբայրանան : Այլ եւս կարելիութիւնչկայ թուրքո-հայ հաշտութեան անկեղծութենէն տարակուսելու : Հայ նահատակներուն բրգաձեւ չեղձակոյտը, որ կը բաժնէր Հայը թուրքէն, հիմայ ան է որ կը մօտեցնէ զանոնք :

Այդ եղերական չեղձակոյտը ամենէն ահռելին էր արատաւարներուն : Եթէ ճտեղծով, յօգ-

ուածներով կամ Գոնկրէի խորհրդակցութիւններով միայն զայն բառնալը անքան երկար տարիներէ ի վեր անկարելի թուեցաւ հայ ազգասէրներէն շատերուն, եւ նոյն ինքն Ղ. Յ. Դաշնակցութեան, որ՝ երկայն վարանումներէ յետոյ՝ անցեալ տարի միայն այդ Ռուպիքօնն անցնելու որոշման կրցաւ յանգիլ, թուրքերը ասիկա բնական պէտք է գտնեն : Թուրք ազատականները յաճախ Հայոց կը յիշեցնէին թէ՛ Հայ նահատակներուն հետ՝ իրենք թուրքերն ալ ունէին հազարաւոր մարտիրոսներ եւ թէ՛ թուրք ու Հայ հաւասարապէս զոհն էին բռնապետական ըծիմին : ասիկա ճիշդ էր, բայց ոչ ամբողջապէս : տարբերութիւն մը կար, ահաւոր, երկաստարգ թուրքերը կեղեքուած էին թուրք կառավարութենէն, Հայերը՝ թուրք կառավարութենէն եւ թուրք ժողովրդին մեծամասնութենէն : Հայերը երբեք թուրք ժողովրդին վրայ յարձակում չեն գործած, այլ թուրք բռնապետական ըծիմին ու զայն մարմնաւորող պաշտօնական մարմիններուն ու անձերուն դէմ, մինչ հարիւր հազարաւոր Հայեր, ամենամեծ մասամբ անզէն, Հայ ըլլալու յանցանքին համար միայն, կոտորուեցան, կառավարութեան հրամանով, բայց թուրք ձեռքերու գործադրութեամբ . . . ահա ինչ որ պէտք էր դարմանել, մոռցնել, ու գործնականապէս :

Այսօր, շնորհիւ թուրք ազատականներուն ցոյց տուած կորովին ու ազնուութեան, կացութիւնը հիմն ի վեր չըջած է, եւ հերիզոնը փոխուած է բացարձակապէս :

Նիսիւր եւ Էնիվէր հազարապետները որ իրենց գինուորներով լիւր բարձրանալով առաջին նրշանը տուին թուրք գործօն յեղափոխութեան, ժամանակակից պատմութեան ամենէն մեծ արժեքներէն մին է որ կատարեցին, որովհետեւ այդ արարքին հետեւանքով իսկական Ազատութիւնը անաջին անգամ ըլլալով մտաւ Տաճկաստանի մէջ : Ենորհիւ այդ քաջերուն՝ կարելի է ըսել թէ թուրք ցեղը երկրորդ անգամ տիրապետեց իր հայրերուն աշխարհակալած երկիրներուն, եւ անեղի տեւական տիրապետութեամբ մը քան նախկինը, որովհետեւ այս անգամ բիրտ ուժը չէ որ կը կանգնի տիրող, այլ բարոյական մեծ մկիթունքի մը, ազատութեան, արդարութեան, քաղաքակրթութեան սիրոյն վրայ՝ կը

հիմնուի այս նոր աշխարհակալութիւնը :
 Յաղթական Նոր-Թուրքը ձիով չի մտնել
 Այա-Սոֆիա, այլ յարգանքով կ'երթայ հայ տա-
 ճարը՝ եղբայրութեան խօսքեր ըսելու հայ հա-
 սարակութեան « Հիւանդ մարդը » առողջացած
 է վճռականապէս : Զինուորապէս ուժեղ ցեղի
 մը բազուկին տակ խմբուած ժողովուրդներու
 ստրկական հաւաքածուի մը տեղ, հիմայ կա-
 րելի է յուսալ թէ պիտի տեսնենք վերանորոգ-
 եալ ազատասէր թուրք ցեղի մը շուրջ հաւաք-
 ուած այլազան ժողովուրդներու ազատ համա-
 խըմբում մը : Եւրաքանչիւրը պահելով իր տոհ-
 մային ինքնութիւնը, ամենքը անկեղծօրէն անձ-
 նուէր՝ Ամբողջութեան պահպանման ու զօրաց-
 ման :

Հայոց սէրը եւրոպային համար չէ հիմ-
 նուած կրօնական զգացման վրայ : Հայը ա-
 մենէն քիչ կրօնամոլը, նոյն իսկ ամենէն քիչ
 միստիքականն է բոլոր ցեղերուն. Հայ Եկեղեց-
 ւոյ հանդէպ իր խորին խանդավառանքը՝ « ազ-
 գային » եւ « ազգապահպան » հաստատութեան
 մը հանդէպ տածուած բնազդական զգացումն է :
 Հայը եւրոպային դիմած է որովհետեւ անոր ա-
 ջակցութեամբ կը յուսար ստանալ ազատ պայ-
 մաններ առանց որոնց ապրիլը ամօթ մըն է :
 Եւրոպան սիրելի է Հայուն ոչ թէ որովհետեւ
 քրիստոնեայ է, այլ որովհետեւ այնտեղ է որ
 ազատութեան, արդարութեան սկզբունքները
 ամենէն որոշ ու զեղեցիկ ձեւով յղացուած եւ
 իրագործուած են, այնտեղ է որ նոր ժամանակ-
 ներուն մէջ՝ Արուեստները, Գրականութիւնը,
 Գիտութիւնը ամենէն հրաշալի ծաղկումն ունե-
 ցած են. Եւրոպան՝ Հայուն համար՝ Նեւտոնն
 է, Լավուազիէն է, Կլօֆէն է, Շէքսպիրն է,
 Փրանսական Յեղափոխութիւնն է, հեռագիրն է,
 շոգեկառքն է : Երբ կը տեսնենք թուրք նոր
 սերունդը՝ խանդավառօրէն յարած եւրոպական
 քաղաքակրթութեան այս բոլոր բարերար ար-
 գասիքներուն եւ որ ինքն իսկ մեղի չափ կը
 ցանկայ ապրիլ եւրոպական ըմբռնումներով,
 այլ եւս անհրաժեշտութիւն չի մնար որ Հայը
 Եւրոպայէն սպասէ իր բազդին վճուածը : Հայ
 ու թուրք հիմայ կարող են՝ ձեռք ձեռքի տուած՝
 իրենց եւրոպասէր Արեւելցիի գերը միասին կա-
 տարել, միասին աշխատել Օսմանեան Պետու-
 թիւնը բարգաւաճեցնելու ասոր համար ներ-

դաշնակօրէն միասնելով Արեւմուտքի մտայնու-
 թիւնն ու Արեւելքի զգայնութիւնը :

Հայը երբէք պիտի չզգարի իր ցեղային ա-
 ւանդութեանց հաւատարիմ մնալէ : Ու թուր-
 քերը ամենամեծ սխալ մը պիտի գործէին՝ եթէ
 որ մը՝ ձգտէին ձուլել Օսմանեան Պետու-
 թեան ոչ-թուրք ցեղերը : Այդ տեսակ ապագայ
 կարելիութեան մը վախը մին է եղած գլխաւոր
 պատճառներէն որոնք այսքան երկար ատեն
 արգիլեցին հայ յեղափոխականներուն համա-
 ճայնութիւնը Երիտասարդ թուրքերուն հետ :
 Հայը, մին կազմելով պետութեան յաղկացու-
 ցիչ տարրերէն, Օսմանցի է Օրէնքին առջեւ,
 եւ Օսմանցիութեան բոլոր իրաւունքները պէտք
 է ունենայ եւ բոլոր պարտականութիւնները
 պէտք է կատարէ. բայց եւ Հայ է իր արիւնով,
 խառնուածքով, պատմական աւանդութիւննե-
 րով, Հայ է իր հոգեբանական անջնջելի իրա-
 կանութեան մէջ : Այդ երկուութեան պահպա-
 նումը, Հայուն, ինչպէս Արարին, Ալպանացիին
 կամ Մակեդոնացւոյն, Ասորիին կամ Թուրքիոյ
 Յոյնին համար, ոչ մէկ վտանգ կը ներկայացնէ
 պետութեան ամբողջութեան զօրացմանը դէմ,
 քանի որ այդ բոլոր ցեղերը ազատական Օս-
 մանեան Պետութեան մը կցուած ըլլալուն մէջ
 իրենց մասնաւոր շահերուն իսկ պահպանման
 երաշխիքը պիտի գտնեն :

Բռնի ուժով ձուլումը արդէն կրբէք իսկա-
 կան յաջողութիւն չէ ունեցած : Արդի ժամա-
 նակներուն մէջ, ցեղային ընագրը շատ զօրեղ
 է, գիտակից, անքակալիւ Դարձ մը ի վեր Ռու-
 սիա ամենէն բարբարոս միջոցները ձեռք առաւ
 Լեհերը ռուսացնելու, բայց եւ ոչ իսկ մէկ Լեհ
 մը ռուսացած է ցարդ. Գերմանացիք, որ այժմ
 կը ճգնին իրենց պետութեան մէջ գտնուած Լե-
 հերը գերմանացիել, աւելի եւս կ'արծարծեն ա-
 նոնց ազգասիրութիւնը եւ զիրենք զգուշիկ կը
 կացուցանեն քաղաքակրթ աշխարհին : Նոյն
 իսկ Փրանսայի մէջ, ուր ցեղերու ձուլումը կա-
 տարուած իրողութիւն մըն է, անա վաթսուն
 տարի է որ Փրովանսիք իրենց ազգային յա-
 սուակ հին հանգէտները, աւանդութիւնները, լե-
 զուն ու գրականութիւնը վերակենդանացնել են

սկսած, եւ տուած են արդէն տիեզերահոչակ բանաստեղծ մը, Ֆրեաներիք Միսթրալը, որ իր բոլոր գործերը գրած է փրովանսերէն լեզուով. Ֆրանսական կառավարութիւնը երբէք արգելք չէ դրած այդ շարժման, ընդհակառակն համակիր ու թոյլատու եղած է անոր, նկատելով որ Փրովանսիք Ֆրանսական ամբողջութենէն անջատուելու ձգտում չունին, եւ իրենց ցանկութիւնն է՝ Ֆրանսական ընդհանուր կեանքով ապրելով հանգեւ ձ իրենց ցեղային մասնաւոր քաղաքակրթութիւնն ալ պահպանել: Աւստրիոյ մէջ Լեհերը, Աւստրիացի են ու Լեհ են միանգամայն, անկեղծօրէն անձնուէր պետութեան ընդհանուր շահերուն, եւ խանդավառօրէն հաւատարիմ իրենց ցեղային ինքնուրոյն քաղաքակրթութեան:

Մէկ քանի թուրքեր, այս վերջին օրերուն արասասնուած ճառերու մէջ, ըսեր են յաճախ՝ « Ա՛լ Հայ, Յոյն, Թուրք չկայ, ամենքս ալ Օսմանցի ենք » . ասիկա կը հասկնամ թուրքի մը կողմէն ըսուած, եւ կ'ընդունիմ ալ, եթէ ասիկա ըսել կ'ուզէ թէ այլ եւս թուրքի եւ բայայի անհաւաստութիւնները օրէնքի առջեւ վերցուած են եւ թէ այժմ Օսմանեան Պետութեան բոլոր բնակիչները հաւասար իրաւունքներ ու պարտականութիւններ պիտի ունենան: Բայց այն Հայերը որ այդ « Ա՛լ Հայ չկայ, Օսմանցի ենք » ազազակը կը յեղեղեն իրենց ճառերուն մէջ կամ « Հայաստան » բառը գործածելու կարելիութիւնը կը ձգնին փաստել, կ'ապշեցնեն զիս: Հայաստան աշխարհագրական ու պատմական անունն է այն երկրին ուր մեր հայերը մեր ցեղը կազմուցին. ուրիշ անուն կարելի չէ տալ այդ երկրին. նոյն իսկ « ճուղուած » Ֆրանսային մէջ, Պրըթաներ, Նորմանտի, Փրովանս, եւն. անունները միշտ պահպանուած են: Ու Հայը, Օսմանցի ըլլալով, Հայ ըլլալէ չի դադարիր: Հայ անունին համար 300,000 հոգի զոհուելէ յետոյ, Հայ մը շատ տգեղ բան մը կ'ընէ « Ա՛լ Հայ չկայ » ըսելով:

Այս պահուս, երբ իսկական, ազնիւ, բացարձակ ազատութիւնը կը տիրապետէ Օսմանեան Պետութեան մէջ, պէտք է ամէն ոք խօսի լիակատար անկեղծութեամբ. պէտք է ամենուն զիրքը ճշդուի յստակօրէն: Իսկապէս անջատուական ձգտում Հայոց ստուար մեծամասնու-

թեան մէջ՝ գոյութիւն չէ ունեցած. սակաւաթիւ են եղած այն Հայերը որ զուտ հայկական տուն մը վերականգնել երազեցին. ու երէկուան քառասոյին կացութեան մէջ, երբ ստրկութիւնը, տառապանքը կը խղզէին Տաճկաստանի բոլոր ցեղերը եւ ամենէն աւելի՝ Հայերը, կը ազատութեան անձկակարօտ ու բռնութեան հանդուրժելու անկարող սրտերը բոլոր հորիզոններուն վրայ խաւար, չփոթութիւն, անստուգութիւն, յուսախարութիւն միայն կը տեսնէին, կ'որելի՞ էր, նոյն իսկ ներելի՞ էր որ գէթ ափ մը Հայեր այդ դիցազնական երազը չունենային: Բայց Հայ ժողովրդական զանգուածը ցանկացած է արդար ու քաղաքակիրթ բեժիմ մը միայն՝ իր նախահարց Հողին վրայ գերութեան դատապարտուած Հայութեան համար. մեր յեղափոխականները՝ ստուար մեծամասնութեամբ՝ պայքարած են հիմնելու համար Հայաստանի նահանգներուն մէջ վարչականապէս ինքնավար բեժիմ մը, միշտ կապուած Օսմանեան Պետութեան: Այսօր, երբ ազատականութեան ողին կը տիրապետէ ամբողջ Օսմանեան Պետութեան մէջ, անջատողական ձգտում նուազ քան երբէք կարող է գոյութիւն ունենալ Օսմանեան Պետութեան մէջ գոնուող ո եւ է ցեղի մօտ. բայց այդ ցեղերը, անոնք մանաւանդ որ պատմական անցեալ մը, ինքնուրոյն քաղաքակրթութիւն մը ունին, պարտաւոր են աշխատիլ որ իրենց այդ յատուկ քաղաքակրթութեան պահպանումը եւ զարգացումը մշտապէս ապահովուին նոր բեժիմին հիմունքը կազմելիք օրէնսդրութիւնով իսկ: Հայը, որ երեք-չորս հազար տարուան անցեալ մը ունի իր ետեւ, պարտաւոր է՝ այս գեղեցիկ ու մեծ բուսէին՝ երբ պետութեան ապագայ կեանքը ծրագրուելու վրայ է, բերելով հանդերձ այդ ընդհանուր վերաշինութեան համար իր բոլորանուէր անկեղծ աջակցութիւնը, հոգ տանիլ նաեւ որ իր ցեղային արժանապատուութիւնը, զիրքն ու ապագան յարգուին եւ ապահովուին:

Թուրքերը բնաւ պէտք չունին մասնաւոր ջանքեր ընելու որ Հայերը լրջօրէն լուրացնեն թուրք լեզուն ու քաղաքակրթութիւնը. Հայերը թուրքերուն չափ խնամքով սորված են միշտ թուրք լեզուն եւ թուրք մտաւոր շարժման հետեւած ու մերթ աջակցած ալ են. այդպէս ալ

պիտի շարունակեն . մենք գո՛ւ պիտի ըլլայինք որ այսուհետեւ Թուրքերը սկսէին քիչ մը հետաքրքրուիլ մեր հայրենի գեղեցիկ լեզուով ու գրականութեամբ, զոր կարող են նկատել իբրեւ Օսմանեան Պետութեան ամենէն ինքնատիպ զարդերէն մէկը :

1876ի Սահմանադրութիւնը , որ վերակենդանացաւ , ունի իր քարեփոխելի մասերը, ինչպէս Թուրք ազատականներն ալ կը յայտարարեն . Թուրք ազատականներուն ամբողջութիւնը ցարդ յայտարարած է թէ սահմանադրական բեփմին մէջ աչաքեղ ազգութեանց ներքին եկեղեցական , զարոցական ու տոհմային կազմակերպութիւնները որ արդէն իսկ գոյութիւն ունին՝ անեղծ պիտի պահպանուին : Անոնք նոյնպէս՝ վերջերս՝ յայտարարեցին թէ ցումանեան սահմանադրական կառավարութիւնը պիտի յարգէ նաեւ միջազգային դաշնագրերը : Իսկ ազատական Թուրքերու մէկ որոշ կուսակցութիւնը , որուն գլուխն է իշխան Սապահէտտին , կը ցանկայ լայն ապակեդրոնացման սկզբունքին վրայ հիմնել պետութեան վերանորոգ կազմածքը : Թէ ինչ պիտի ըլլան 1876ի Սահմանադրութեան ըզրեփոխումները , թէ ինչ չափով եւ ինչ ձե-

ւով ապակեդրոնացման սկզբունքը պիտի իրագործուի , զայդ պիտի տեսնենք երբ Օսմանեան Խորհրդարանը գումարուի :

Հայութիւնը այժմ այդ Խորհրդարանին պիտի ներկայացնէ իր ազգային հարցը , « Հայկական Հարցը » , զոր Պերլինի դաշնագրին 61րդ յօդուածը եւ 1895ի մեմորանտոմը պաշտօնապէս նուիրագործած են . Հայութիւնը հիմայ Օսմանեան Խորհրդարանին գործակցութեամբը պիտի ջանայ լուծել այդ հարցը :

Մաղթենք , եւ այսատիւր , որ այդ Խորհրդարանին մէջ , Օսմանեան Պետութեան բոլոր ցեղերուն ներկայացուցիչները , այս վայրկեանիս տիրող անկեղծ եղբայրութեան զգացմամբ միշտ վառուած , պետական ամբողջութեան ինչպէս եւ բաղկացուցիչ տարրերուն շահերովը միանգամայն նախանձախնդիր , գտնեն քաղաքական այն լայն ու ճապուկ բանաձեւը որուն վրայ հիմնուելով այդ Պետութիւնը կարող ըլլայ ունենալ կեանք չը ներդաշնակ , հզօր ու մշտատու :

Ա. ՉՕՊԱՆԵԱՆ

Վիլնոսիւն-Մեո

20 Ognus. 1908



ՀՈՅՍ ՏԵՍԱԻ

LES TROUVÈRES ARMÉNIENS

Traduction française

AVEC UNE INTRODUCTION



par

ARCHAG TCHOBANIAN



Գինն է 3 ֆր. 50



Գինն ազգոգնեցը պէտք է դիմեն՝

Librairie du Mercure de France

26, Rue de Condé, Paris

Ա. ՉՊԱՆԵԱՆ

ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

1889—1907

Արշալոյս. — Ժամերուն կարաւանը. — Անձկու-
րիւն. — Տեսիլներ. — Գիշերին մեջ. —
Բյուրին վրայ.



Տպագր. Տ. ՏՊՂՐԱՄԱՃԵԱՆ



Գին 5 ֆրանկ

Այս հատորը տպուեցաւ նիւթական աջակ-
ցութեամբ Պ. Դաւիթ Աւան-Իւզբաշեանցի :

Առանձին գրքոյի ձեռնոյ յոյս տեսաւ



Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

Զ Ա Ր Դ Ը

(1895—1896)

Տպագր. Տ. ՏՊՂՐԱՄԱՃԵԱՆ



Գին 50 սանթիմ

Դիմել՝ Librairie Gouttemberg

TIFLIS

ՏԻԱՐ ՅԱՐՈՒԹԻԻՆ ՈՒՆՃԵԱՆԻ

ԱՇԽԱՏԱՍԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿՋԲՈՒՆՔ

ԻՐԱԻԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՄԱՍՆ Ա. Բնական իրաւագիտութիւն. 0,90 սևր.
ՄԱՍՆ Բ. Դրական » 0,50 »
ՄԱՍՆ Գ. Միջազգային » 0,90 »

Ընդ Մարկով

ՄԱՍՆ Դ. Պատմական իրաւագիտութիւն

Տպագրութիւն՝ Սր. Ղազար, Վեներսիկ

Հասցէ՝ Artaky Oundjian

22, Rue Milton, 22

Paris (IX)

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԱՆԱՀԻՏ

- Թիւ 1. — Անարոյ Յրանս . Եպիկուրի պարսկըր , (Հատուածներ) , Թարգմանեց Ա. Չոպանեան ,
հեղինակին կենդանագրով . Գին 1 ֆրանք
- Թիւ 2. — Ալֆրէս Տը Վիլնիի Քերբուածները , հեղինակին կենդանագրով , Թարգմանեց Ա. Չո-
պանեան : Գին 1 ֆրանք
- Թիւ 3. — Օմար Խաչեանի Բառեակները , քննական ուսումնասիրութեամբ մը պարսկերէն բնա-
գրէն Թարգմանեց Դ. Փառնակ . Գին 3 ֆրանք

ԱՆԱՀԻՏ Ի բաժանորդագրութեան պայմանները

ԱՆԱՀԻՏը կը հրատարակուի ամիսը անգամ մը :

Բաժանորդագրինն է տարեկան՝ 10 ֆրանք (ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ), 2 տոլար (Ամերիկա), 2 ռուպլի (Ռուսիա) :

Վեցամսեայ՝ 5 ֆրանք (ֆրանսա), 6 ֆրանք (օտար երկիրներ), 1 տոլար (Ամերիկա), 3 ռուպլի (Ռուսիա) :

Յօդուած եւ բաժանորդագրին զրկել հետեւեալ հասցէին .

A. TCHOBANIAN

17, Rue La Bruyère

Paris



Այս թիւը կը ծախուի՝ ձեռքէ՝ 2 ֆրանկի



« ԱՆԱՀԻՏ » Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Թիւիւս	Պարոն Լեւոն Մելիք-Ալամեանց Օրբելեան փողոց, թիւ 24
Բագու	» Ստեփան Ալչքճեան
Ռուսնուզ	» Գառնիկ Մաղմանեան
Գահիրէ	» Արմենակ Ատիլէեան
Ճիլիպէ	» Թազուր Հինդլեան
Դաւրիզ	» Վ. Բժշկեան
Ուօֆեկըն	» Տ. Մաճեան
Եսք Բեմպրին	» Գարրիէլ Մուչէղեան
Եսք Ուօքրքաուճ	» Կ. Մալխասեան
Սէնթրըլ Յօլս	» Նշան Մինասեան
Չիֆալօ	» Ս. Մուրատեան
Նեուէ	» Յ. Արոզեան
Ուսքը	» Յարութիւն Տ. Խաչոյեան
Ճրէզնօ	» Գ. Նալպանտեան
Նիւ Պրիթէյն	» Ս. Սաչտըլեան
Փրովիսէնս	» Աւագ Կարապետեան
Նիւ,Եսք	» Եղիա Գուլուճեան